Աշխատանքի ծածկագիրը 403361

ՈՐՈՇՈՒՄ

Ք.Երևան
Բողոքարկման հանձնաժողովը հետևյալ կազմով՝
Նախագահությամբ՝
Սերգեյ Մարաբյանի
Մասնակցությամբ անդամներ՝
Մակար Կիրակոսյանի
Տիգրան Ոսկանյանի

28.07.2026թ.

Բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) քննության առնելով դատավորների թեկնածուների ցուցակի քրեական մասնագիտացման բաժնի համալրման նպատակով հատուկ կարգով անցկացված որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ բերված բողոքը

ՊԱՐԶԵՑ

Բողոքարկվել է թեստային առաջադրանքի 2-րդ, 10-րդ, 13-րդ, 14-րդ, 25-րդ, 29-րդ հարցերը:

Բողոքարկված հարցերի պարագայում հանձնաժողովի գնահատականը իրավաչափ է, իսկ բողոքաբերի կողմից ներկայացրած փաստարկները բավարար չափով պատճառաբանված չեն:

Գնահատականը ենթակա չէ փոփոխման:

Բողոքարկվել է թեստային առաջադրանքի 34-րդ հարցը:

Բողոքաբերի հիմնավորումները առ այն, որ առաջադրանքը ունի տեխնիկական վրիպակ՝ բացակայում է օժանդակ բայ, որը թյուրըմբռնման տեղիք է տալիս, ընդունելի է: Հետևաբար՝ կարող է ընդունելի լինել բողոքաբերի կողմից տրված պատասխանը:

Անհրաժեշտ է շնորհել 1 միավոր:

Բողոքարկվել է իրավական խնդիր 1-ը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բողոքաբերը մասնակի կատարել է ճիշտ որակումներ, դրանց վերաբերյալ ներկայացրել է բավարար չափով պատճառաբանություններ, ինչպես նաև ուղենիշային պատասխանում առկա են հակասությունները, ուստի հանձնաժողովը գտնում է, որ սույն իրավական խնդրի վերաբերյալ բողոքաբերի կողմից ներկայացված փաստարկները իրավաչափ են:

Անհրաժեշտ է շնորհել 4,5 միավոր:

Բողոքարկվել է իրավական խնդիր 4-ը:

Խնդրի ուղենիշային պատասխանը առ այն, որ Կ-ի արարքը պետք է որակվեր նաև ՀՀ քրեական օրենսգրքի 456-րդ հոդվածով վիճահարույց է, և խնդրի պայմաններից ևս չի բխում, որ Կ-ն հափշտակել է պետհամարանիշները

(համարանիշները գետն է նետել իրավապահ մարմինների կողմից ավտոմեքենայի հայտնաբերումը դժվարացնելու նպատակով), ուստի բողոքաբերի խնդրին տրված պատասխանը կարող է դիտարկվել իրավաչափ: Ինքնին ուղենշային պատասխանի մեջ նշվածը առ այն, որ ՀՀ քրեական օրենսգրքի 456-րդ հոդվածի մասով՝ պետհամարանիշի հափշտակությունը անուղղակի դիտավորությամբ է թույլ տրվել, վիճահարույց է:

Անհրաժեշտ է շնորհել 1,5 միավոր:

Բողոքարկվել է իրավական խնդիր 6-ը:

Առաջադրանքի փաստական կողմի վերլուծության և առաջարկվող հարցադրման համադրությունից հետևում է, որ բողոքաբերի պատասխանը պետք է վերաբերվեր Դատարանի գործողությունների իրավաչափությանը և մասնավորապես՝ ժամկետի հիմքով միջնորդությունը մերժելու իրավաչափությանը: Մինչդեռ ուղենիշային պատասխանում շեշտադրում է արվում է այն հանգամանքի վրա, թե ինչ չափանիշների պետք է համապատասխաներ քննիչի միջնորդությունը և, հետևաբար ըստ ուղենիշային պատասխանի քննիչի միջնորդությունը պետք է մերժվեր ընթացակարգը չպահպանելու հիմքով, որը վարույթի հարուցումը մերժելու հիմք է, ոչ թե միջնորդությունը: Հետևաբար՝ ելնելով այս շփոթմունքի բարձր աստիճանից բողոքաբերը չէր կարող պատկերացնել, որ իրենից ակնկալվում է վարույթի հարցումը մերժելու հիմքը քննարկել որպես միջնորդությունը մերժելու հիմք: Բողոքաբերի պատասխանը պետք է համարել լիարժեք:

Հետևաբար՝ պատասխանը պետք է համարել լիարժեք և շնորհել 3 միավոր:

Բողոքարկվել է իրավական խնդիր 7-ը:

Բողոքաբերի պատճառաբանությունները, որ իր կողմից ներկայացված վերլուծությունները իրար հակասող չեն, ընդունելի է, քանի որ ակնհայտ է, որ ներկայացվում է տարբեր իրավիճակներ քրեադատավարական նորմի կիրառման վերաբերյալ և արդյունքում բողոքաբերը հանգում է իրավաչափ լուծման, որը արձանագրվել է նաև ստուգող հանձնաժողովի կողմից:

Անհրաժեշտ է շնորհել 3 միավոր:

Միաժամանակ բողոքարկման հանձնաժողովը արձանագրում է, որ թեստային առաջադրանքների և իրավական խնդիրների վերաբերյալ բողոքաբերի կողմից ներկայացրած բողոքը քննարկվել է դրա հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Բարձրագույն դատական խորհրդի 26.04.2026 թվականի թիվ ԲԴԽ-36-Ո33 որոշման 4-րդ հավելվածի 4-րդ բաժնի 9-րդ կետով՝ Հանձնաժողովը

ՈՐՈՇԵՑ

Թիվ 403361 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը բավարարել մասնակի՝ թեստային առաջադրանքի 34-րդ հարցի

համար բողոքաբերին շնորհել մեկ միավոր, իսկ իրավական խնդիր 1-ի համար 4,5 միավոր, իրավական խնդիր 4-ի համար 1,5 միավոր, իրավական խնդիր 6-ի համար 3 միավոր, իրավական խնդիր 7-ի համար 3 միավոր, արդյունքում թեստային առաջադրանքի ընդհանուր հանրագումարը կազմում է 46-ը միավոր, իսկ իրավական խնդրի ընդհանուր հանրագումարը կազմում է 34 միավոր:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝